ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ /ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ/ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

21.06.2024 ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔ ԲԱԶՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) և ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի 2024թ.-ի հունիսի 21-ին Լոռու մարզի Փամբակ համայնքի Բազում բնակավայրի վարչական շենքում ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Ռ. Ղազարյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Փամբակ համայնքի Բազում բնակավայրի կրթահամալիրի /միջնակարգ դպրոցի/ կառուցման վերաբերյալ (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի 8-րդ ենթակետ) առաջին հանրային լսում:

Օրակարգում.

1. Փամբակ համայնքի Բազում բնակավայրի կրթահամալիրի կառուցման վերաբերյալ հանրային քննարկում

Հանրային քննարկման առաջին փուլին ներկա էին.

-Բազումի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական բաժնի մասնագետ Մարինե Վարդանյանը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական բաժնի մասնագետ Դավիթ Եսայանը

<<Ռ. Ղազարյան >> ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Աբրահամյանը

<<Այպոշին>> ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Պողոսյանը

Տեխնիկական հսկողություն իրականացնող <<Իրտիգ>> ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Պողոսյանը

Համայնքպետարանից ներկայացուցիչներ

Դպրոցից ներկայացուցիչներ

Համայնքի բնակիչներ

Բացման խոսքով հանդես եկավ Բազում համայնքի վարչական ղեկավար Ա. Ծատուրյանը, ով ողջունեց ներկա գտնվողներին և ներկայացրեց հանրային քննարկման նպատակը:

Մարինե Վարդանյանը ներկայացրեց, որ շինարարական աշխատանքների ընթացքում պետք է բոլոր նորմերը պահպանվեն և շինհրապարակ պետք է լինի սահմանազատված: Տարածքը փոշու ազդեցությունից զերծ պահելու համար պարբերաբար պետք է կատարվի ջրցանման աշխատանքեր:

Արթուր Աբրահամյանը ներկայացրեց շինության տիպային նախագիծն ամենայն մանրամասնությամբ և նշեց, որ գրեթե փոփոխության չի ենթարկվի, բացառությամբ տեղադիրքի հետ կապված չնչին փոփոխությունների:

Ներկաները նախագծի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին մասնագետներին և գոհունակություն հայտնեցին ու հավանության արժանացրին այն:

Հանրային քնարկման ընթացքում դեմ կարծիքներ չհնչեցին, առարկություններ չեղան:

Բազումի վարչական ղեկավար՝ ----------Ա. Ծատուրյան

Արձանագրող՝ ---------- Ա. Պլուզյան